ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/114

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.07.2018թ. թիվ 03/26-3/13459-18 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 23.07.2018թ. թիվ ԱԹ/9971-18 գրության հիման վրա, 24.07.2018թ. թիվ 03/26-3/13459-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Խաչպար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած 01.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հիմնադրվել է 04.02.2002թ. և մինչ օրս զբաղվում է դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների, ատամնաբուժական գործիքների, ախտահանիչ միջոցների մեծածախ առևտրով, որը հիմնականում իրականացվում է տարբեր բուժհաստատությունների կողմից կազմակերպված մրցույթներին մասնակցելու, հաղթող ճանաչվելու և պատշաճ կերպով մատակարարումներ իրականացնելու միջոցով:

«Խաչպար» ՍՊԸ-ն պետական գնումների գործընթացներին մասնակցել է 06.12.2004թ. թիվ ՀՕ-160-Ն, 22.12.2010թ. թիվ ՀՕ-206-Ն և 16.22.2016թ. թիվ ՀՕ-21-Ն «Գնումների մասին» ՀՀ օրենքներով սահմանած պայմաններով և շուրջ 15 տարվա ընթացքում չի եղել անգամ մի դեպք, որ «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած լիներ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ս.թ. հունիսի 28-ի դրությամբ առաջացած ժամկետանց հարկային պարտավորությունները գոյացել են այն բանից հետո, երբ «Խաչպար» ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի 2018թ. հունիսի 11-ի թիվ 3000656 հանձնարարագրի հիման վրա իրականացվել են համալիր հարկային ստուգումներ 2015-2017 թվականների համար, որոնց ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ճշտումներ կատարելու 2015-2017 թվականների հարկային հաշվետվություններում, ինչը կատարվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 2018թ. հունիսի 26-ին, ժամը 21:15-ից մինչև 21:19 ընկած ժամանակահատվածում:

Մինչև ճշտում ներկայացնելու օրը՝ 2018թ. հունիսի 25-ը ներառյալ, Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ոչ միայն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլև ունեցել է 553 515 (հինգ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամի գերավճար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 19.07.2018թ. թիվ 1972 տեղեկանքի համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.06.2018թ. ունեցած 1 803 367 (մեկ միլիոն ութ հարյուր երեք հազար երեք հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունները առաջացել են ճշտված հաշվետվությունների ներկայացման հետևանքով հաշվարկված 615

967 (վեց հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի հարկային պարտավորությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած 737 400 (յոթ հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի տույժերի և 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի տուգանքների գումարներից:

«Խաչպար» ՍՊԸ-ն 2018թ. հունիսի 29-ին ՀՀ Կենտրանական գանձապետարանի հաշվին է փոխանցել իր կողմից կատարված ճշտումների չափով գումարները՝ 2015թ. համար 2 220 000 (երկու միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, 2016թ. համար 410 000 (չորս հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, որոնց արդյունքում՝ հունիսի 28-ից ընդամենը 1 օր հետո, ոչ միայն մարվել են բոլոր ժամկետանց հարկային պարտավորությունները, այլև առաջացել է 826 170 (ութ հարյուր քսանվեց հազար հարյուր յոթանասուն) ՀՀ դրամի գերավճար:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ս.թ. հուլիսի 2-ին բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է ս.թ. հունիսի 28-ին՝ թյուրիմացաբար կարծելով, որ հարկային պարտավորությունները ճշտվում են հայտերի բացման նիստի օրվա՝ հուլիսի 2-ի դրությամբ, և որ ս.թ. հունիսի 29-ին վճարելով հարկային պարտավորությունները, հուլիսի 2-ի դրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ն ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ այլևս չի ունենա:

Այդ թյուրիմացության ապացույց կարող է հանդիսանալ այն, որ «Խաչպար» ՍՊԸ-ն կարող էր հունիսի 28-ին ներկայացված փաթեթը հետ վերցնել և նորից ներկայացնել ինչպես հունիսի 29-ին, այնպես էլ հուլիսի 2-ին՝ մինչև ժամը 12:00-ն, սակայն դա չի արվել, քանի որ Ընկերությունը թյուրիմացաբար կարծել է, որ հարկային պարտավորությունների ճշտման օր է համարվում հայտերի բացման նիստի օրը:

«Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ ս.թ. հունիսի 28-ին եղած հարկային պարտավորությունները ընդամենը 1 օր հետո գերավճարներով մարվել են Ընկերության կողմից, ուստի այդ ընդամենը 1 օրը հիմք չհամարել շուրջ 15 տարվա բարեխիղճ

հարկատու «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 730 օրով ներառելու համար, ինչպես նաև խնդրել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/114 ընթացակարգի շրջանակներում 30.07.2018թ. ժամը 10:15-ին և 01.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 01.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.07.2018թ. թիվ ԱԹ/9971-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 02.07.2018թ. բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցել է «Խաչպար» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստում Ընկերության հայտը գնահատվել է բավարար և հիմք ընդունելով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը «Խաչպար» ՍՊԸ-ն 11-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով 06.07.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան՝ 10.07.2018թ. ստացված եզրակացության համաձայն, «Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 1 803 367 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ:

Հանձնաժողովը, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով ս/թ հուլիսի 11-ին հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստում «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/114 ընթացակարգի շրջանակներում 30.07.2018թ. ժամը 10:15-ին և 01.08.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 28.06.2018թ. հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 9-րդ չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա***

դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 803 367 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2018թ. թիվ 03/26-3/13459-18 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 23.07.2018թ. թիվ ԱԹ/9971-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Խաչպար» ՍՊԸ-ի գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման

համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 28.06.2018թ. հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 9-րդ չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 06.07.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Խաչպար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 803 367 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2018թ. թիվ 3000656 հանձնարարագիրը, որի

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան տեսուչներին հանձնարարվել է «Խաչպար» ՍՊԸ-ում 01.01.2015թ. -31.01.2018թթ. ընկած ժամանակահատվածի համար իրականացնել համալիր հարկային ստուգում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 19.07.2018թ. «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» թիվ 1972 տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 28.06.2018թ. դրությամբ ունեցել է 1 803 367 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն (824 068 ՀՀ դրամ՝ շահութահարկի գծով, 529 299 ՀՀ դրամ՝ եկամտային հարկի գծով և 450 000 ՀՀ դրամ՝ տուգանքի և վնասի հատուցման գումարի մասով):

Համաձայն «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 29.06.2018թ. թիվ 2320 և թիվ 2321 վճարային հանձնարարականների՝ Ընկերությունը 29.06.2018թ. ՀՀ կենտրոնական գանձապետարանի «900008000490» հարկերի միասնական հաշվին կատարել է համապատատասխանաբար՝ 2 220 000 և 410 000 ՀՀ դրամի վճարումներ:

Ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.07.2018թ. տրված թիվ 1975 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 29.06.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2018թ. թիվ 3000656 հանձնարարագրի հիման վրա «Խաչպար» ՍՊԸ-ում իրականացված համալիր հարկային ստուգումների հետևանքով Ընկերության մոտ «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա՝ 28.06.2018թ. դրությամբ գրանցվել է 1 803 367 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, որն Ընկերության կողմից 29.06.2018թ. մարվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մասնակիցը ***մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը*** կարող է փոփոխել կամ ***հետ վերցնել իր հայտը:***

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-22» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել ***02.07.2018թ. ժամը 12:00-ն ներառյալ:***

«Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է ***28.06.2018թ.***: Միևնույն ժամանակ Ընկերությունը ***29.08.2018թ., մինչև Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը,*** սահմանված կարգով ՀՀ կենտրոնական գանձապետարանի «900008000490» հարկերի միասնական հաշվին կատարել է Ընկերության մոտ հարկային ստուգման արդյունքում արձանագրված ժամկետանց հարկային պարտավորության մարմանն ուղղված համապատասխան վճարում և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 19.07.2018թ. տրված թիվ 1975 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 29.06.2018թ. դրությամբ արդեն իսկ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 1 803 367 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ գնահատելով «Խաչպար» ՍՊԸ-ի գործողությունները, գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորությունները մարելուց հետո Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հնարավորություն ուներ հայտը հետ վերցնել և մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը կրկին ներկայացնել այն, որի պայմաններում Ընկերության մոտ ժամկետանց հարկային պարտավորության փաստ չէր գրանցվի: Չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը չի օգտվել Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական հնարավորությունից և համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրված եզրակացության, Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ արձանագրվել է ժամկետանց հարկային պարտավորություն, այնուամենայնիվ գնահատելով «Խաչպար» ՍՊԸ-ի վարքագիծը և գործողությունները, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.07.2018թ. թիվ 03/26-3/13459-18 գրությամբ՝ «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00071045) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**